ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №6.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

27 հունվարի 2018թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Նիստին հրավիրվել էր մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:*

/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

2. *2017-18 ուստարվա երկրորդ կիսամյակի դասապրոցեսի նախապատրաստական աշխատանքներ:*

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

3. *Անվանական կրթաթոշակի նշանակում:*

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2017-18 ուս. տարվա I կիսամյակում ֆակուլտետում իրականացված աշխատանքերի մասին: Ըստ ուսումնական գործընթացի հաստատված ժամանակացույցի ամբիոնների և դեկանատի համատեղ աշխատանքի շնորհիվ իրականացվել են բոլոր պահանջները: Համակարգչային մասանագիտական լաբորատորիան օգտագործվում է նպատակին: Ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանով նախատեսված նիստերը ըստ օրակարգի անց են կացվել հաստատված ժամկետում: Իրականացվել են նաև նախորդ նիստերում ընդունված

որոշումները: Ֆակուլտետում դասաժամի բացթողում չի եղել, կրճատվել է ուսանողների կողմից անհարգելի բացակայությունները, դասախոսական կազմի և աշխատակիցների կողմից կարգապահական խախտումներ չի եղել, կազմակերպված անց է կացվել քննաշրջանը:

Այնուհետև նա անցավ քննաշրջանի արդյունքների քննարկմանը: Ըստ կուրսերի և ուսուցման ձևի /ընդհանուր, անվճար և վճարովի/ ներկայացրեց առաջադիմությունը, որը կցվում է արձանագրության տեքստին:

Զեկուցողը միաժամանակ ներկայացրեց 2017-18 ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի գրաֆիկը, որը կկազմակերպվի *06.02.-24.02.2018թ.* ժամանակահատվածում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Ս. Հովակիմյանը, Ա. Վ. Ցուցուլյանը, Գ. Վ. Գուլակյանը: Ս. Ռ. Դավթյանը իր խոսքում ներկայացրեց, որ ,,Քարտեզագրություն և կադաստրային գործ,, մասնագիտության երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողներից կան ուսանողներ, որոնք արդեն անցել են մասնագիտական աշխատանքի: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին, ավելացնելով, որ ֆակուլտետում իրականացվում է պատշաճ ուսումնական գործընթաց:

Նիստի մասնակիցները ընդգծեցին, որ ֆակուլտետի ուսումնական և աշխատանքային գործընթացը իրականացվում է բարձր մակարդակով, որի համար եղավ ընդանուր առաջարկ ֆակուլտետի գործունեությունը գնահատել բավարար:

Այնուհետև ընդարձակ ելույթով հանդես եկավ մասնաճյուղի տնօրեն պարոն Ս. Ա. Առաքելյանը: Նա իր գոհունակությունը հայտնեց, որ ֆակուլտետը գտնվում է բարձր մակարդակի վրա իր կարգապահական և կրթական պատրաստակամությամբ: Նա ընդգծեց, որ ֆակուլտետի ,,Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, , ,,Քարտեզագրություն և կադաստրային գործ,, մասնագիտությունները մեծ պահանջարկ ունեն աշխատաշուկայում և որ կարևորն է այդ շրջանավարտները մրցունակ են աշխատաշուկայում: Բարձր գնահատեց բնական գիտությունների ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, աշխատակիցների կատարած աշխատանքը, որոնք իրենց աշխատանքային պարտականությունները կատարում են բարեխղճորեն, նվիրումով, ուսանողների կարգապահության և դաստիարակության գործում ունեն զգալի ներդրում:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ֆակուլտետի իրականացրած ուսումնական, աշխատանքային գործընթացը գնահատել բավարար:

1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2017-18թթ. ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի գրաֆիկը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ընթացիկ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակները ըստ մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է ուսումնական պլանին համապատասխան, դասախոսական անձնակազմի պակաս չկա: Իրականացվել են ուսումնական պարապմունքների կազմակերպման կազմակերպչական նախապատրաստական բոլոր աշխատանքները: ՈՒսումնական պարապմունքները կվերսկսվի 05.02.2018թ.:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Կ. Ս. Դարբինյանը, Ա. Ս. Հովակիմյանը: Նրանք առաջարկեցին ներկայացնել հաստատման 2017-18ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2017-18ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը:

Օրակարգի երրորդ հարցի մասին դեկան Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց, որ ,,Քարտեզագրություն և կադաստրայի գործ,, մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Անգին Հրաչյայի Ծատուրյանը ունի երեք կիսամյակ անընդմեջ գերազանցություն, ուստի հավակնում է անվանական կրթաթոշակի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Ա. Վարդանյանը և Ա. Օրդինյանը: Նրանք համակարծիք էին, որ Ա. Հ. Ծատուրյանը ունի գերազանց առաջադիմություն և պատշաճ վարքագիծ: Եղավ ընդհանուր առաջարկ ներկայացնել տնօրենություն հաստատելու նիստի որոշումը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել Անգին Հրաչյայի Ծատուրյանին ,,Մոնթե Մելքոնյան,, անվանական կրթաթոշակ նշանակելու համար:

ՆԱԽԱԳԱՀ **Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**